

ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ շՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՆ

Հոկտեմբեր 27-ին, Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեծ շուքով նշեց իր հիմնադրութեան 30-ամեակը: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շերաթոն Ֆրամինկհամ հիւրանոցին մէջ, ներկայ էին հանդիսութեան հովանաւոր Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեանի ներկայացուցիչ Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիելեան, ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ Վարչութեան անդամներ Վահրամ Դանիելեան եւ Գօգօ Պալեան, Շրջանային վարչութեան անդամներ, Քանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Վահան Զալիքեան, Ս. Ստեփանոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Անդրանիկ Ա. Քհնյ. Պալճեան, Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Ռաֆֆայէլ Անտոնեան եւ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Պատուելի Աւետիս Պոյնարեան:

Շրջանային Վարչութեան, Պոսթոնի մասնաճիւղի վարչութեան եւ մանաւանդ 30-ամեակի կազմակերպիչ յանձնախումբի ժրաջան աշխատանքին շնորհիւ հանդիսութիւնը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ:

Հանդիսութիւնը սկսաւ դրօշակիր արի-արեւոյշներու հանդիսաւոր մուտքով, որմէ ետք Սեւակ Խաչատուրեան կատարեց Միացեալ Նահանգներու, Հայաստանի Հանրապետութեան եւ «Յառաջ Նահատակ» քայլերգները:

Հանդիսավար եւ կազմակերպիչ յանձնախումբի անդամ Աւօ Պարմաքեան բացման իր խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց շուրջ 400 ներկաներուն եւ շեշտեց մարմնակրթական այս կազմակերպութեան առաքելութեան կարեւորութիւնը, որպէս նորահաս սերունդին հայեցի դաստիարակութիւն եւ բարոյականի տէր մարդ պատրաստելու գործին լծուած 90-ամեայ կազմակերպութիւն:

Պոսթոնի մասնաճիւղին կողմէ խօսք առաւ վարչութեան ատենապետ Ռազմիկ Փանոսեան, որ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց բարոյական եւ նիւթական նեցուկով կը նպաստեն կազմակերպութեան աշխատանքներուն:

Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Յակոբ Իշխանեան, որ ընդգծեց ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ Վստահութիւն ցուցաբերելու կարեւորութիւնը, որպէս մատղաշ սերունդի հայեցի դաստիարակութեան ապահով ու հոգատար միջավայր:

Շրջանի 30-ամեակին առիթով Քանատայի Շրջանային Վարչութեան շնորհաւորանքները փոխանցեց Վահան Զալիքեան: Ան յիշեցուց հիմնադրութեան առաջին քայլերը, երբ որպէս միացեալ շրջան միասին ճամբայ կ'ելլէին Քանատայի ու Արեւելեան Միացեալ Նահանգներու ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ, իրենց հարազատ կազմակերպութեան հունտերը ցանելով հիւրընկալ այս նոր ափերուն վրայ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շրջանի Կեդրոնական Կոմիտէին խօսքը փոխանցեց Հայկ Օշական: Ան իր խօսքին մէջ ընդգծեց հայապահպանումի ու հայակերտումի համասփիւռքեան աշխատանքի ծիրին մէջ 90-ամեայ այս կազմակերպութեան ունեցած անուրանալի դերը, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ հասակ նետած սերունդները վերանկախացած հայրենիքին հետ կամրջելու ստեղծած հնարաւորութիւնները: Հ. Օշական անդրադարձաւ նաեւ շրջանի մէջ ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ ղեկավարութիւններուն եւ յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաստատեց, թէ ՀՀԴ-ն իր բոլոր հնարաւորութիւններով կ'աջակցի ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ, որպէսզի այս կազմակերպութիւնը շարունակէ իր նուիրական առաքելութիւնը:

ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ Կեդրոնական Վարչութեան անդամ Վահրամ Դանիելեան շեշտեց ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ համահայկական կառոյցին մէջ Արեւելեան շրջանի 30-ամեայ կազմակերպութեան տեղը, որ նուաճուած է անոր անդամներուն ու համակիրներուն անխնայ աշխատանքին շնորհիւ: Ան կոչ ուղղեց ժողովուրդին, որ իրենց մատղաշ գաւակները վստահին ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ, շարունակեն զօրակցիլ այս կազմակերպութեան, յանուն մեր նոր սերունդի հայեցի դաստիարակութեան:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիելեան, որ նախ փոխանցեց շրջանէն դուրս գտնուող Թեմի Բարեջան Առաջնորդ Օշական Արք. Զօլոյեանի օրհնութիւնն ու շնորհաւորանքները, ապա իր հայրական պատգամին մէջ վեր առաւ մեր ազգային իրականութեան մէջ ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ մատուցած անփոխարինելի ծառայութիւնը: Սրբազան Հայրը շեշտեց, թէ հայ եկեղեցւոյ եւ հայ դպրոցին կողքին՝ ՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԳԵԱԼ ՆԱԽԱՆՁՆԵՐՈՒ իր մասնաճիւղերով ու ակումբներով եղաւ այն հարազատ տունը, ուր սերունդներ հայկականութեամբ զինուեցան ու կարողացան պահպանել մեր մշակոյթը, լեզուն ու պատմութիւնը:

Բոլոր ներկաներուն կողմէ յատուկ գնահատանքի արժանացան կազմակերպիչ յանձնախումբի անդամները, որոնք անսակարկ նուիրումով գերազանց յաջողութեամբ կազմակերպած էին 30-ամեակի սոյն հանդիսութիւնը:

Պաշտօնական ծրագիրէն ետք, երեկոն խանդավառեց համահայկական ճանաչումի տէր երգիչ Ատիս Հարմանտեան եւ իր նուագախումբը: